

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՈԳԻՆ

«... Ապա եթէ որ զՀոգին Քրիստոսի
ոչ ունի, սա չէ Նորա»:

Հոովմ. Ը. 9.

Առաքեալն ասում է, իսկ եթէ մէկը Քրիստոսի հոգին չունի, նա նրանը չէ: Պարզ, կտրական վճիռ է այս. ևս առաւել մի օրէնք է սա և այն հիմնական օրէնք, որ առանց Քրիստոսի, չի կարելի քրիստոնեայ լինել, ինչպէս զուր ճգնում են համոզել մեր ժամանակում ոմանք, որոնք ֆիզիքական աշխարհի սակաւ ինչ գիտութեամբ հպարտացած ըմբոստացած են, փոխանակ հեզ և խոնարհ հոգով կրելու Քրիստոսի քաղցր և թեթև լուծը:

Նրանք և ոչ որ բացարձակապէս չեն կարող և այդ արդէն անհնարին է ուրանալ, որ մարդկութեան բարգաւաճման ռահսորդը քրիստոնէական սկզբունքներն են, որ քրիստոնէութեանն է պարտական եւրոպական քաղաքակրթութիւնը և որ մարդկութեան ապագայ բարօրութեան համար հոգացող առաջաւորները իրենց գաղափարները ձեռք բերած են քրիստոնէական դաստիարակութեան ազդեցութիւնից և նրա սկզբունքներից:

Այդ քրիստոնէական դաստիարակութեան ազդեցութեան թուլանալուցն է, որ մենք այժմ տուժում ենք ժամանակիս խստասրտութիւնից և անարդարութիւնից, թէև դեռ շատ-շատ են ռազմիկ քաջամարտիկ գնդեր, որոնք ապրում են քրիստոնէական վարդապետութեան բարձր իդէալների համաձայն:

Իրա համար պարտք կայ իւրաքանչիւր հաւատացեալի վրայ, ոչ միայն գոհ լինել նրանով, որ ինքը հաստատ և ճշմարտապէս Քրիստոսինն է, այլ և անտարբեր չըլինել

այն մարդկանց վերաբերմամբ իւր շրջանում, որոնք մուրրուած՝ հին հեթանոսների նման և փարիսեցիաբար ասում են, մենք խղճի օրէնքով և գիտութեան ցուցմունքով ենք ապրում:

Պարտք է ամենքի համար այդպիսիներին մօտեցնել դէպի սուրբ Աւետարանը, դէպի Քրիստոս Աստծու հաւատը, մանաւանդ ուշադրութիւն դարձնելու է այդ մասին մատաղ սերնդի վրայ:

Պարզ է, որ Քրիստոսի հողին պիտի գոյաւորութիւն ստանայ մեր մէջ, ոչ թէ լոկ անուանապէս, այլ էապէս և գործնականապէս: Ոչինչ դժուարութիւն չըկայ հասկանալու համար, որ անխօս, անգիտակից նորածին երեխային երեք անգամ ընկղմելով ջրի մէջ սուրբ Երրորդութեան անունով, ձևական մկրտութիւնը կատարելով և մեռնում գրոշմելով նրան, նա դեռ չըստացաւ Քրիստոսի հողին: Յիշեալ արարողութիւնները միայն մի նշանադրութիւն էին և մի պայմանաւոր պատասխանատու պարտականութեան, յանձնառութեան առհաւատչեայ քահանայի, ծնողների և կնքահօր համար, որ նրանք պիտի Քրիստոսի հողին տակաւ առ տակաւ մտցնէին նորածնի մէջ, ամրապնդէին, հաստատէին այնտեղ, որ նա պատկանէր միայն Քրիստոսին, միայն համակուէր Քրիստոսով: Այդ նպատակին չի կարող հասցնել ոչ մի արտաքին ծիսակատարութիւն և ձևականութիւն, որովհետև զրանք այս խնդրում առ առաւելը միայն մի նշան են կամ ցուցանակ, թող լինին և համարեա մի շատ թէ քիչ օժանդակիչ միջոց, Բուն քրիստոնէական հողին ստացում է միայն դաստիարակութեամբ և կրթութեամբ, որ սկսւում է օրօրոցից մինչև մկրտուածի արբուն հասակի կատարեալ գիտակցութեան հասնելը և ապա շարունակւում է ինքնուրոյնաբար:

Երեխայի ծնողները և դաստիարակները իրենց գուրգուրանքով և զթոս վերաբերմունքով պիտի զարգացնեն նրա մէջ սէր, որ է քրիստոնէութեան հիմքը, սէրը յառաջացնում է սէր, սիրով կեանքի ամեն կնճիղները լուծւում են, երեխան պիտի մեծանայ սիրոյ մթնոլորտի մէջ, մի-

Չավայրը պիտի շրջապատէ նրան ջերմ գուրգուրանքով:

Այստեղ, ի հարկէ, աւելորդ չէ, այլ և անհրաժեշտ է յիշել, որ միայն Քրիստոսի հոգին ունեցողը կարող է նոյնը ներշնչել իւր սանիկին և նրա մէջ կրթել նրան, սա հիմնական սկզբունք է այս խնդրի մէջ:

Քրիստոնէական կրթութիւնը և դաստիարակութիւնը մանուկի հասակի համեմատ պիտի սկսուի ձևաւորից, որ կրում է իւր մէջ հոգևորի կամ վերացականի սաղմերը ու հետզհետէ պիտի անցնին դաստիարականին: Նորածին մանուկի լանջից կախել խաչիկ, նրա օրօրոցի վրայ խաչակնքել քնեցնելիս, լողացնելուն ջուրն ածելիս ասել Յիսուս և Քրիստոս, նրա թաթիկով նրա երեսին խաչակնքել և այլն գեղեցիկ սովորութիւններ են:

Երբ նրա լեզուն բացուում է, առաջինը պիտի սովորեցնել նրան յանուն Հօր ասելը և երեսը խաչակնքելը: Երբ նրա ոտները պնտին և նա քաջարար քայլէ, պիտի տատիկի կամ մայրիկի հետ եկեղեցի գնայ: Չորս, հինգ տարեկան նա պիտի հոգևոր խօսքեր լսէ, սուրբ խօսքերին և բառերին վարժուէ, Հայր մեր, փոքրիկ աղօթքներ բերանացի սովորէ, մեր պարեպաշտ նախնիք այդպէս էին անում, այդպէս էլ պիտի շարունակել. երբ երեսան սկսի դպրոց յաճախել, նրա գրքերի պայուսակի վրայ պիտի կարել խաչի նշանը, ինչպէս որ մինչև հիմա դեռ շատ գիւղերում հոգածու մայրիկներն անում են:

Միւս կողմից դեռ շատ վաղ, մանուկ հասակից, պէտք է երեսային վարժեցնել գործնական կերպով ընդունելու Քրիստոսի հոգին՝ սէր, գութ, ողորմածութիւն, հեզութիւն և խոնարհութիւն, զրա համար բազմաթիւ առիթներ կան առօրեայ կեանքի մէջ, երբ նորա մատղաշ սրտում կարելի է անջնջելի դրոշմել ամեն տեսակ առաքինութիւն: Օրինակ սովորեցնել նրան իւր մրգից կամ մի համեղ պատառից մասն տալ կամ բոլորովին նուիրել մի ընկերի, կարօտի, հիւանդի, աղքատի, ներել և շուտ հաշտուել իրեն զարկող կամ որ և է կերպ նեղացնող, վշտացնող, վիրաւորող ընկերին: Սովորեցնել քաղցր վարուել և կերակրել փխտոյին,

շնիկին, հաւիկին, թռչնակներին, տանել ողորմութիւնը տալ աղքատին, մեծերի հետ այցի գնալ շքաւորների մօտ օգնութիւն հասցնելու և հիւանդների մօտ նոյնպէս օգնելու կամ սփոփելու և այլն:

Պատմել երեսաներին առաքինական, քրիստոնէական, փոքրիկ զրոյցներ, գնալ ուխտատեղեր, եկեղեցական հանդէսներին, մասնակցել երգիչների խմբին և այլն:

Այսպէս դաստիարակելով մանուկը, երբ նա հասնի պատանեկական տարիքին, արդէն նա լաւ նախապատրաստուած պիտի լինի իւր հոգևոր պասքը յազեցնելու անկախաբար բուն քրիստոնէական աղբիւրի յաւիտենական ակից, այն է սուրբ Աւետարանից, որ է բովանդակ Քրիստոսի հոգին:

Իւրաքանչիւր գրագէտ պիտի իւր համար կենսական պահանջ դարձրած լինի մինչև իւր վերջին շունչը կարգալ սուրբ Գիրքը և խոկալ, այլ և կարգալ ուրիշների համար, այլ և յորդորել ուրիշներին նոյնն անել, կարգալ ընտանիքներում, դասարաններում, խմբուած մարդկանց մէջ, մեկնել, բացատրել: Աշխատել սուրբ Գիրքը տարածել, վաճառելով, նուիրելով, յորդորելով գնել և այլն: Ամեն քրիստոնեայ ամեն վիճակում պարտաւոր է քրիստոնէութեան քարոզիչ լինել իւրովսանն, պարտաւոր է իւր քրիստոնէական հոգին ներշնչել, հաղորդել, հաստատել և ուրիշի մէջ:

Հապա որչափ ծանր ու պատասխանատու է քրիստոնէական պաշտօնակատարների պարտիքը, այսինքն ուսուցիչների, քահանաների, վարդապետների, առաջնորդների և կաթողիկոսի. չէ՞ որ դրանց կոչումն է Քրիստոսի հոգին ընձեռել հօտին յարատև և կանոնաւոր քարոզութեամբ, ընդհանրական թղթերով, սուրբ Գիրքը աշխարհաբարի վերածելով և բիւրաւոր օրինակներ տալել տարածելով:

Սուրբ Կրթի անընդհատ ընթերցանութեան հակումը, սէրը, ունակութիւնն ուղ և ծուծ, արիւն պիտի դառնայ իւրաքանչիւր անհատի համար. բաւական չէ այն ծանօթութիւնը, որ աշակերները ստանում են դպրոցում սրբա-

զան պատմութեան դասերից, այլ անհրաժեշտ է բուն բնագրից՝ Աստուածաշունչից ամեն օր մի փոքրիկ կտոր կարդալ աշակերտներին կամ նրանցից մէկին կարդացնել տալ, միւսները ունկնդրեն: Կարդացածի մեկնութիւն կամ բացատրութիւն տալը երրորդական պահանջ է, կարևորն է, որ կտորը կամ հատուածը հասկանալի լինի, կարդացուի ազդու և սրտառուչ. սուրբ Գրքի շնորհքը, զօրութիւնը անհուն է, նա իւր պէտք եղած տպաւորութիւնը կանէ, միայն թէ նրան լսեն, կարդան, այդ կրթական վարժութիւնները սուրբ Գրքի ընթերցանութիւնը կը դարձնեն ցկեանս ամենօրեայ հոգեկան սնունդ:

Իւրաքանչիւր տան ընտանիքում պիտի գտնուի սուրբ Գիրք և անպատճառ ամեն օր նրանից մի գլուխ պիտի կարդացուի ի լուր ամենի:

Նոյնը պիտի անեն քահանաները, քարոզիչները եկեղեցիներում, ուրիշ է քարոզի ազդեցութիւնը, ուրիշ է պարզ սուրբ Գրքի ընթերցանութեան տպաւորութիւնը:

Միմիայն այս միջոցներով կարելի է Քրիստոսի հոգին հաստատել և ամրացնել հաւատացեալի մէջ, անդադար սնուցանելով մեր հոգին սուրբ Գրքով, մենք կը լինենք իսկական, ճշմարիտ քրիստոնեայ, Քրիստոս, նրա հոգին կը բնակի մեր մէջ, մենք կը լինենք նրանը, նա կը լինի մերը, ամեն ցաւ, վիշտ մեզ համար վախճան կըստանայ և մենք կը լինենք երջանիկ:

Նիկողայոս վարդ. Տէր Աւետիքեան:

